Շ Ն Ո Ր Հ Ա Վ Ո Ր Ո Ւ Մ Ե Ն Ք

Սեպտեմբերի 4-ին լրացավ բանասիրական գիտությունների թեկնածու, հայոց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի պրոֆեսոր Օֆելյա Ենոքի Բաբայանի 70-րդ տարեդարձը:

«Եթե մարդն իր ծննդյան համար պատասխանատու չէ, ապա իր ապրածի ու ստեղծածի համար պատասխանատու է հաստատապես»,- ասում էր Վ. Փափազյանը: Իր անցած ճանապարհը բծախնդիր պատասխանատվությամբ ու նվիրումով կերտող մանկավարժ է Օֆելյա Ենոքի Բաբայանը:

Մասնագիտական բարձր պատրաստականությամբ, խստապահանջ, հայերենի և առանձնապես հին հայերենի հանդեպ ունեցած ակնածանքը ուսանողին օրինակելիորեն փոխանցող, գնահատելիս՝ արդար, գովելիս՝ ոչ շռայլ. այսպես են նրան ճանաչում ուսանողները: Ու այդպես քանի՜ սերունդ հերթաբար նրա անվանը նույնացրել է հին հայերենի իր սերն ու ճանաչողությունը:

Բոլորված տարիներ, որ խորհրդանշում են գիտնականի ու մանկավարժի անդուլ աշխատանք, վաստակ ու նվիրում, տարիներ, որ պատիվ ու հպարտություն են թե՛ այդ ճանապարհը կերտողի, թե՛ այդ ճանապարհին նրան հետևորդ եղած սերնդի համար:

Շնորհավոր Ձեր Մեծ տարեդարձը, մեր սիրելի՛ ընկեր Բաբայան, եղե՛ք առողջ, ու թող Ձեր ցանածն այսուհետ էլ առատ հունձք բերի, և մշտապես լինի Ձեր տալիքը, իսկ մեզ համար՝ Ձեզանից առնելիքը:

* * *

Օրերս կազմակերպվել է գնահատանքի և մեծարման հոբելյանական ցերեկույթ՝ նվիրված ԱրՊՀ պրոֆեսոր, բ.գ.թ., գիտության վաստակավոր գործիչ Օֆելյա Բաբայանի ծննդյան 70-ամյակին: Օ. Բաբայանի մարդկային վեհ նկարագիրն ու աշխատանքային գործունեությունն իրենց ելույթներում գնահատեցին ուսանողները, գործընկերները, որոնցից շատերին նա ուղղորդել է դեպի մանկավարժություն և գիտություն:

ՌԵԿՏՈՐԸ ՀԱՆԴԻՊՈՒՄ է ՈՒՆԵՑԵԼ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՀԵՏ

Սեպտեմբերի 29-ին ԱրՊՀ ռեկտոր Մ. Մինասյանը հանդիպում է ունեցել ուսանողական խորհրդի հետ, լսել ուսանողությանը հուզող խնդիրները, նրանց առաջարկությունները, պատասխանել հարցերին:

Հանդիպման սկզբում ռեկտորը շնորհավորել է ՖՈՒԽ նորընտիր նախագահներին և անդամներին, մաղթել արդյունավետ և անշահախնդիր գործունեություն: Ուխ նախագահ Դիանա Խաչատրյանը ռեկտորին և ուսանողությանն է ներկայացրել Ուխ գործունեության հիմնական ուղղություններն ու առաջիկա անելիքները: Ուխ նախագահության նիստում ընդունված որոշումների համաձայն ուշադրության կենտրոնում են պահվելու նաև սոցիալական կարգավիճակ ունեցող ուսանողների խնդիրները:

Հանդիպման ընթացքում ՖՈՒԽ նախագահները ներկայացրել են առկա խնդիրները, դրանց լուծման վերաբերյալ հանդես եկել առաջարկություններով, որոնց մի մասին ռեկտորը խոստացել է լուծում տալ: Ռեկտորն և հանդիպմանը ներկա ՈՒՇՀՀՏԱ գծով պրոռեկտոր Վիտյա Յարամիշյանը հավաստիացրել են, որ համալսարանի ղեկավարությունը պատրաստ է պարբերաբար հանդիպելու և քննարկելու ուսանողության ցանկացած խնդիր և առաջարկություն, միայն թե պետք է լինել նախաձեռնող և ակտիվ:

«ԱՐՑԱԽԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ամսաթերթ
Հիմնադիր՝ «ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՊՈԱԿ
Հրատարակվում է 1994 թվականից

Խմբագիր՝ Զարիհե Սառաջյան
Մեր հասցեն՝ Մ.Գոշի 5:
Հեռ.՝ (047) 94 04 91

Տպաքանակ 400
Տպագրվում է Արցախի պետական համալսարանի հրատարակչության տպարանում

Իմացի՛ր քո համալսարանի մասին:
Այցելի՛ր asu.am կայք:
www.asu.am

ԱՐՑԱԽԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԱՄՍԱԹԵՐԹ - ЕЖЕМЕСЯЧНАЯ ГАЗЕТА «АРЦАХИ АМАЛСАРАН»

№ 06 (202)
ՍԵՊՏԵՄԲԵՐ, 2017

Ա Ն Կ Ա Խ Ո Ւ Թ Յ Ա Ն Դ Ա Ս

Սեպտեմբերի 1-ին Արցախի պետական համալսարանում անցկացված անկախության ավանդական դասը վարում էին ԱՀ Աժ նախագահ, ԱրՊՀ Խորհրդի նախագահ Աշոտ Ղուլյանը և ԿԳՍ նախարար Սլավիկ Ասրյանը:

ԱրՊՀ զոհված ուսանող - ազատամարտիկների հիշատակը հավերժացնող հուշակոթողին ծաղիկներ խոնարհելուց հետո անկախության դասը բացեց ԱրՊՀ ռեկտոր Մանուշ Մինասյանը: Ռեկտորը շնորհավորեց առաջին կուրսեցիներին, ապա ներկայացրեց համալսարանի հաջողությունները և կոչ արեց ակտիվորեն մասնակցել իրականացվող բոլոր միջոցառումներին:

Աժ խոսնակ Աշոտ Ղուլյանը սեպտեմբերյան տոների կապակցությամբ շնորհավորանքի ու բարեմաղթանքի խոսքից հետո ներկայացրեց Արցախի Հանրապետության անկախության հռչակման երևույթը՝ շարժումից մինչև մեր օրեր: Նա կոչ արեց լավագույնս դրսևորվել ուսումնառության տարիներին և ստացած մասնագիտական ու մարդկային որակները ծառայեցնել ազգային շահերին:

ԿԳՍ նախարար Սլավիկ Ասրյանն իր ելույթում կարևորեց անկախության ճանապարհի մեր ձեռքբերումները հույս հայտնելով, որ ներկայիս սերունդը ոչ միայն կշարունակի, այլև կբազմապատկի լավագույն ավանդույթները:

ԿԱՅԱՑԱՎ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏ

Օրերս ԱրՊՀ-ում կայացավ գիտական խորհրդի նիստ, որին մասնակցում էր նաև ԱՀ ԿԳՍ նորանշանակ նախարար Նարինե Աղաբալյանը:

Նախքան օրակարգային հարցերին անցնելը՝ ԱրՊՀ ռեկտոր Մանուշ Մինասյանը շնորհավորել է Նարինե Աղաբալյանին՝ պատասխանատու և կարևոր պաշտոն ստանձնելու կապակցությամբ և համալսարանականների անունից պատրաստակամություն հայտնել՝ աջակցելու կրթության ոլորտի զարգացմանն ուղղված նրա նախաձեռնություններին:

«Հավաստիացնում ենք, որ համալսարանականներն իրենց ուժերի հնարավորության չափով մասնակից են լինելու կրթության և գիտության ոլորտում առկա խնդիրների լուծման գործընթացներին՝ ապահովելով զարգացման դրական դինամիկա»,- ասել է ռեկտորը:

«Ես իմ հարազատ կրթօջախում եմ և բնավ խորթ չեմ զգում, ընդամենը կարգավիճակի փոփոխություն, որը պարտավորեցնում է համատեղ լուծումներ գտնել ոլորտում, մասնավորապես բուհական համակարգին վերաբերող խնդիրների համար»,- նշել է ԿԳՍ նախարարը:

Ն. Աղաբալյանը, որպես բուհական համակարգի առաջնային խնդիր, ներկայացրել է համալսարանի հավատարմագրման խնդիրը. «Մենք որակի ճանաչելիության խնդիր պիտի դնենք մեր առջև, որի ճանապարհին բոլորս մեծ անելիքներ ունենք»:

Ռեկտորը ծննդյան 70-ամյակի կապակցությամբ շնորհավորել է նաև ԱրՊՀ պրոֆեսոր, բ.գ.թ., գիտության վաստակավոր գործիչ Օֆելյա Բաբայանին՝ արժևորելով նրա գործունեությունը՝ որպես նվիրյալի:

Օրակարգային ութ հարցերից երկուսը վերաբերում էին մանկավարժական և արտադրական փորձուսուցման նկարագրերի և ուղեցույցի հաստատմանը, որոնք հաստատվեցին միաձայն: Հաջորդ հարցերը վերաբերում էին կանոնակարգային և կառուցվածքային որոշ փոփոխությունների:

Ի գիտություն ընդունվեցին համալսարանի հինգ ամբիոնների նախորդ ուսումնական տարվա գործունեության վերաբերյալ հաշվետվությունները, որոնց ընթացքում հնչած խնդիրներին խոստացավ լուծում տալ ԿԳՍ նախարարը:

ԱՐՊՀ-ՈՒՄ ԿԱՅԱՑԱՎ ԱՌԱՋԻՆ ԿՈՒՐՍԵՑԻՆԵՐԻ ԵՐԴՄԱՆ ՀԱՆԴԻՍԱՎՈՐ ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆԸ

Սեպտեմբերի 21-ին Արցախի մայր բուհում կայացել է առաջին կուրսեցիների երդման հանդիսավոր արարողությունը:



Միջոցառմանը ներկա էին ԱՀ Աժ նախագահ, ԱրՊՀ խորհրդի նախագահ Աշոտ Ղուլյանը, ԿԳՍ նախարարի պաշտոնակատար Սլավիկ Ասրյանը, ԱրՊՀ ռեկտոր Մանուշ Մինասյանը, համալսարանի ղեկավար կազմը, ուսանողներ, հյուրեր:

Նախքան արարողությունն սկսելը՝ ներկաները նախ ծաղիկներ են խոնարհել ԱրՊՀ զոհված ուսանող-ազատամարտիկների հիշատակը հավերժացնող հուշակոթողին: Երդման տեքստն ընթերցելու պատիվն այս տարի վերապահված էր բանասիրական ֆակուլտետի լրագրություն բաժնի առաջին կուրսի ուսանողուհի Շողեր Սարգսյանին, ով իր և իր ընկերների անունից երդվեց «վառ պահել նահատակված ուսանողների հիշատակը, հավատարիմ մնալ նրանց վեհ գաղափարներին, պատվով ու պատասխանատվությամբ շարունակել նրանց կիսատ թողած գործը, սիրել և սրբությամբ պահպանել հայրենի երկրի զարգացման ու բարգավաճման ուղին բռնած մայր բուհը»:

Առաջին կուրսեցիներին ուղղված շնորհավորանքի խոսքում Ա. Ղուլյանն ընդգծել է երկրին հավատարիմ լինելու և նրա կերտած արժեքները կրող սերունդ ունենալու կարևորությունը՝ նշելով.

«Դուք եք այն սերունդը, ով տերը պիտի լինի ավագների կյանքի գնով նվաճած ազատությանն ուանկախությանը և հենց դուք պիտի բարձր պահեք 1991 թվականին ձեռք բերած և Ապրիլյան պատերազմում վերահաստատված անկախության դրոշը՝ մշտապես պատրաստ լինելով դիմակայելու ներքին և արտաքին մարտահրավերներին: Վստահ եմ, որ դուք գիտակցում եք ձեր մեծ առաքելությունը. թշնամուն պետք է հաղթենք նաև գիտելիքներով»:

Ս. Ասրյանը առաջին կուրսեցիներին կոչ արեց արդյունավետ օգտագործել ուսումնառության տարիները և մասնագիտական գիտելիքներ ստանալու ճանապարհին չընկրկել ոչնչի առջև, հաղթահարել բոլոր խոչընդոտները ու հասնել վերջնանպատակին, դառնալ ժամանակակից պահանջներին համապատասխան գիտելիքներով, կարողություններով և հմտություններով զինված մասնագետներ:

«Գիտելիքներ ձեռք բերելու ճանապարհին ազնիվ և պահանջկոտ եղեք ինքներդ ձեր հանդեպ՝ գիտակցելով, որ այն, ինչ կստանաք այսօր, պիտի ծառայեցնեք մեր երկրին ու պետականությանը: Երկիր և պետականություն, որ կյանքի գնով է պահպանվել և ժառանգվել ձեզ»,-հավելել է նա:

ԱրՊՀ ռեկտորը շնորհավորեց և բարեմաղթանքներ հղեց առաջին կուրսեցիներին՝ հորդորելով ակտիվություն ցուցաբերել ոչ միայն ուսումնական գործընթացում, այլև հասարակական, մարզական և մշակութային բազմաբնույթ միջոցառումներում:

«Լիահույս եմ, որ մայր բուհի և նրա նվիրյալների պատիվը բարձր պահելու երդումը ձեզ ուղեկցելու է ոչ միայն ուսումնառության տարիներին, այլև աշխատանքային գործունեության և ամբողջ կյանքի ընթացքում»,-օրվա խորհուրդը կարևորել է ռեկտորը: Երդման հանդիսավոր արարողությունը եզրափակվել է «Կյանք ու կռիվ» պարային խորհրդանշական բեմադրությամբ: Հիշեցնենք, որ ընդունելության արդյունքներով ամենաբարձր միավորներ վաստակած առաջինկուրսեցիներն ուսանողական գրքույկներ են ստացել ԱրՊՀ ռեկտոր Մ. Մինասյանից և միջոցառմանը ներկա պետական այրերից: Նշենք, որ 2017-2018 ուս. տարում բուհի ուսանողական շարքերը համալրվել են թվով 371 (առկա) և 105 (հեռակա) առաջին կուրսեցիներով:

ԱՐՊՀ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ԵՆ ՄԱՍՆԱԿՑԵԼ

ՀԱՀ կողմից պետական և մասնավոր սեկտորի համար իրականացվող մասնագիտական դասընթացներից հերթականը անցկացվել էր ԱրՊՀ-ում, որին իրենց մասնակցությունն են բերել նաև տնտեսագիտության ֆակուլտետի երկու տասնյակ ուսանող:

Սեպտեմբերի 15-ից 17-ը կազմակերպված «Բիզնես Մոդել Կավանս» դասընթացը, որը վարում էր կառավարչական, ֆինանսական հաշվառման և հարկային խորհրդատվության ոլորտում ավելի քան 13 տարվա փորձառություն ունեցող Սեդա Վարդանյանը, ուսանողների հավաստմամբ, հնարավորություն էր՝ զարգացնելու սեփական բիզնես-գաղափարները:

«Դասընթացի ընթացքում ուսումնասիրել ենք ապրանքի օգտակար առաջարկը, սպառողների նպատակային լսարանը, եկամտի ուղիները և ծախսերի տարրերը, անվնասաբերության շեմ և շահույթ հասկացությունները, բիզնեսում հանդիպող պոտենցիալ դժվարությունները, ինչպես նաև բիզնեսի ռազմավարությունը: Հնարավորություն ենք ունեցել դասընթացավարի հետ քննարկելու նաև մեր սեփական բիզնես գաղափարներն ու դրանց զարգացման հեռանկարները»,- նշում են դասընթացի մասնակիցներ Փ. Թադևոսյանն ու Ա. Ավանեսյանը:

ԱՐՊՀ-ՈՒՄ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է ՈՉ ՖՈՐՄԱԼ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐԸ

ԱրՊՀ-ում գործող ոչ ֆորմալ կրթության ծրագրի այս տարվա մեկնարկը տրվել է սեպտեմբերի 14-ին՝ բիզնես - փորձագետներ Վահե Ռոբերտ Այվազյանի և Մայք Լազիևի դասախոսությամբ:

ԱրՊՀ ռեկտոր Մանուշ Մինասյանը հանդիպմանը բացման խոսքում շնորհակալություն է հայտնել Կարեն Օհանջանյանին ծրագրի շարունակականության ապահովման համար՝ համոզմունք հայտնելով, որ ծրագիրը շոշափելի արդյունքներ է տալիս մասնագիտական գիտելիքների խորացման և ընդհանուր զարգացվածության ապահովման առումով:

«Ayvazyan & Partners» ընկերության ղեկավար Վահե Այվազյանը, ով հայաստանյան իրականության մեջ առաջին անգամ անցկացրեց «էմոցիոնալ վաճառքներ» դասընթացը, լսարանին ներկայացրեց էմոցիոնալ վաճառքի սկզբունքներն ու մի շարք օգտակար խորհուրդներ տվեց լսարանին:

Բանախոսը հավաստիացրեց, որ էմոցիոնալ վաճառքների՝ իր կողմից առաջարկված գործիքակազմի ընտրությունը հիմնված է բազմամյա փորձի վրա: Ազդելով մարդու ոչ թե տրամաբանության, այլ էմոցիաների վրա՝ հնարավոր կլինի իրականացնել ավելի շատ վաճառք: Հետաքրքիր է՝ ինչպե՞ս կարելի է ազդել մարդու էմոցիաների վրա, որպեսզի նա որոշում կայացնի գնել այս կամ այն ապրանքը:

«Վաճառքի մեջ շարժիչ ուժը էմոցիաներն են: Վաճառքը հարաբերություն է մարդու և մարդու միջև, հարկավոր է ուսումնասիրել մարդու վարքագիծը, նախասիրությունները և ազդել էմոցիաների վրա: Վաճառքում և սպասարկման մեջ հաջողության հասնելու համար հարկավոր է սիրել հաճախորդին, ճանաչել նրան ու հասկանալ նրա ցանկությունները՝ թեթևացնելով հոգսը»,-ասում է Վ. Այվազյանը:

Թվային մարքեթինգի ոլորտում խորհրդատուի՝ ավելի քան 16 տարվա աշխատանքային փորձ ունեցող Մայք Լազիևը դժվարանում է մեր օրերում պատկերացնել ընկերություն, որը չի օգտագործում թվային մարքեթինգի հնարավորություններն ու գործիքները: «Շատ ընկերություններ ամբողջովին կամ մասամբ իրականացնում են իրենց բիզնեսը թվային հարթակում, մյուսներն էլ օգտագործում են առցանց հարթակը որպես գովազդի և վաճառքի արդյունավետ միջոց: Թվային մարքեթինգը դարձել է մեր օրվա ամենաարդյունավետ մարքեթինգային տեսակը», - նշում է նա:

Բիզնես - խորհրդատուները ուսանողներին ուղղված խորհուրդներից բացի, պատասխանեցին նրանց հարցերին՝ համապատասխան օրինակներ բերելով առօրյայից:

ԱՐՊՀ-ՈՒՄ ՀՅՈՒՐԸՆԿԱԼՎԵԼ ԷՐ ՄԱՐՔԵԹՈԼՈԳ ՍԱՄՎԵԼ ԱՎԵՏԻՍՅԱՆԸ

Օրերս ԱրՊՀ-ում հյուրընկալվել էր Մոսկվայի «Սիներգիա» համալսարանի մարքեթինգի և բրենդինգի ամբիոնի վարիչ, նույն համալսարանի բիզնես-դպրոցի գործընկեր Սամվել Ավետիսյանը:

Տնտեսագիտության ֆակուլտետը նպատակային քայլեր է ձեռնարկում ՀՀ և արտերկրի բուհերի առաջատար մասնագետներին ուսումնական գործընթացներում ներգրավելու ուղղությամբ: Ամբիոնների կողմից մշակված ռազմավարական ծրագիրը, որը ենթադրում է համագործակցություն ամենատարբեր ուղղություններով, նախատեսում է նաև ոչ ֆորմալ կրթություն: Այս շրջանակներում շուկայագետ Ս. Ավետիսյանի դասախոսությունը տնտեսագիտական այլընտրանքային մտածողության լավագույն օրինակներից էր:

MBA ծրագրով Սկոլկովոյում եւ Ստոկհոլմի տնտեսագիտության դպրոցում տնտեսագիտության և Մեծ Բրիտանիայի դիզայնի բարձրագույն դպրոցներում բրենդինգի հիմունքներ դասավանդող մասնագետի մոտեցումները տարբերվում են շուկայագիտության դասական սկզբունքներից: Վերջինս հարցին մոտենում է փիլիսոփայական տեսանկյունից: Այսպես, նա գտնում է, որ ժամանակակից աշխարհը պահանջում է վաճառել ոչ թե ապրանքը, այլ դրա հետ սպառողին կապող արժեքը, որին կարելի է հասնել սպառողի հոգեբանության ուսումնասիրությամբ: Այս տեսանկյունից շուկայագետն առաջարկում է Արցախի տնտեսության բրենդինգի համար ուղենշային դարձնել էկոսնոնդի գաղափարը, որն այսօր մեծ պահանջարկ է վայելում աշխարհում:

Չնայած մասնագետի նորարարական-այլընտրանքային որոշ մոտեցումներն այնքան էլ ընդունելի չէին դասախոսական կազմի համար, այնուամենայնիվ տնտեսագիտության տեսության և կառավարման ամբիոնի վարիչ, տ.գ.թ., դոցենտ Իրինա Իշխանյանը կողմնակից է նման հանդիպումների:

«Դասընթացի շրջանակներում մենք հասցնում ենք լսարանին հաղորդել տեսական հիմնական նյութը և անդրադառնալ հիմնականում դասական տեսություններին, այնինչ նման հանդիպումները հնարավորություն են տալիս տեղեկանալու այլընտրանքային տնտեսագիտության կամ տնտեսագիտական նորարար մոտեցումներին, ինչը տնտեսագիտական մտածելակերպի ձևավորմանը նպաստող գործոն է»,- համոզված է ամբիոնի պատասխանատուն:

ԱՐՊՀ-ՈՒՄ ԿԳՈՐՇԻ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

«Արցախի համալսարան» թերթն այս համարում զրուցել է ԱրՊՀ ՈՒՇՀՀՏԱ գծով պրոռեկտոր, հ.գ.թ., դոցենտ Վիտյա Յարամիշյանի հետ, ում անմիջական նախաձեռնությամբ և շահագրգիռ մասնակցությամբ կյանքի է կոչվել հոգեբանական կենտրոն ունենալու գաղափարը: Պրոռեկտորը պատասխանում է Արցախի պետական համալսարանում ձևավորված նոր ստորաբաժանման՝ Հոգեբանական կենտրոնի անհրաժեշտությանը, նպատակներին, խնդիրներին և գործառույթներին վերաբերող մի շարք հարցերի:

- Պարոն Յարամիշյան, նախ անդրադառնանք Հոգեբանական կենտրոն ունենալու անհրաժեշտությանը: Արդյո՞ք այն պահանջված էր:

- Ես կասեի՝ անհրաժեշտությունները, քանի որ դրանք մի քանիսն են: Նախ, Արցախն ավելի քան 23 տարի ապրում է «ոչ խաղաղություն, ոչ պատերազմ», իսկ երբեմն էլ՝ իրական պատերազմական իրավիճակում, որի արդյունքում զինծառայողների և ազգաբնակչության մոտ առաջ են գալիս հոգեբանական և սոցիալ-հոգեբանական բնույթի բազմաթիվ խնդիրներ, սակայն առ այսօր մշակված չեն բնակչությանը հոգեբանական աջակցություն ցուցաբերելու գործուն մեխանիզմներ, քննության չեն առնված մարտագործողությունից տուժած անձանց պատշաճ հոգեբանական աջակցության ցուցաբերման խնդիրները: Չկան նաև հաստատված մոտեցումներ՝ մեր հանրապետության բնակչության և հակառակորդի վրա հոգեբանական ներազդման մեխանիզմների կիրառման վերաբերյալ: Բնակչությունը թույլ է իրազեկված, թե ինչպես պետք է գործել հակառակորդի լայնածավալ հոգեբանական հարձակումների, տեղեկատվական ներազդման հնարքների կիրառման դեպքում:

Այնուհետև, սովորելով համալսարանում և ստանալով հոգեբանի, մանկավարժի դիպլոմներ, մեր շրջանավարտները իրական կյանքում դժվարությամբ են գտնում ինքնահիրականացման իրենց հնարավորությունը, որովհետև բուհում պրակտիկ հոգեբանի հմտություններն ու կարողությունները թույլ են զարգանում: Պատճառն այն է, որ ցանկացած բուհ առաջին հերթին հետամուտ է լինում ակադեմիական գիտելիքների սերմանմանը՝ մասնագիտական կոմպետենցիաների ձևավորումը թողնելով իրական կյանքին: ԱրՊՀ-ում հոգեբանական կենտրոն ունենալը հնարավորություն է՝ լուծելու նաև այս խնդիրը: Ահա թե ինչով է պայմանավորված Հոգեբանական կենտրոնի անհրաժեշտությունը:

-Ինչպիսի՞ նպատակներ և խնդիրներ է իր առջև դրել Հոգեբանական կենտրոնը:

- Ես արդեն մասամբ թվարկեցի խնդիրները, որոնք բխում են նպատակներից: Մենք նպատակ ունենք Արցախում՝ պետհամալսարանի բազայի հիման վրա, ստեղծել բազմապրոֆիլ հոգեբանական կենտրոն-ծառայություն, որը կունենա հոգեբանական և սոցիալ-հոգեբանական հետազոտություններ իրականացնելու, արտակարգ իրավիճակներին բնորոշ փոփոխություններին արագ արձագանքելու՝ տուժածներին, օգնության կարիք ունեցողներին մասնագիտացված հոգեբանական օգնություն ցուցաբերելու և խաղաղ պայմաններում հոգեբանական աջակցության կարիք ունեցողների հետ համապատասխան հոգեբանական աշխատանքներ իրականացնելու կարողություն:

- Ի՞նչ ուղղություններով է կենտրոնը նախատեսում գործունեություն իրականացնել:

- Քննարկման արդյունքում նպատակահարմար է գտնվել առայժմ ակտիվ գործունեություն ծավալել 2 հիմնական ուղղություններով՝ զինվորական հոգեբանություն՝ ներառելով Պաշտպանության բանակը, ուժային մյուս կառույցները, սահմանամերձ բնակավայրերն ու կոնֆլիկտից տուժած անձինք և տարիքային հոգեբանություն՝ ներառելով նախադպրոցական ուսումնական հաստատություններն ու դպրոցները: Սոցիալական, ընտանեկան և անհատական ուղղությունները նույնպես մեր ուշադրության կենտրոնում կլինեն:

- Հոգեբանական կենտրոնի ձևավորման ուղղությամբ առայսօր իրականացվել են մի շարք միջոցառումներ: Կպատմե՞ք այդ մասին:

- Հունիս ամսին շահագրգիռ քննարկումներ ունեցանք ԱրՊՀ հետ համագործակցության ընդլայնման նպատակով Արցախում գտնվող Խ.Աբովյանի անվան ՀՊՄՀ պատվիրակության հետ՝ ռեկտոր Ռ.Միրզախանյանի գլխավորությամբ: Քննարկվող հարցերից մեկն էլ կենտրոնի ձևավորումն էր: Այնուհետև ԱրՊՀ ռեկտոր Մ.Մինասյանի անմիջական ջանքերով խնդիրը ներկայացվեց հանրապետության իշխանություններին, որից հետո ԱրՊՀ գիտխորհրդի կողմից ընդունվեցին համապատասխան որոշումները: Հոգեբանական կենտրոնի ձևավորման աշխատանքներին անմիջականորեն աջակցելու նպատակով ԱրՊՀ-ում մի քանի անգամ եղել են ՀՀ-ում հաջողությամբ գործող «Ապագա» հոգեբանական ծառայության կենտրոնի հիմնադիր, ՀՊՄՀ դասախոս, հ.գ.թ., դոցենտ Արմեն Բեջանյանը և նույն կենտրոնի պրակտիկ հոգեբաններ Նարիհե Պողոսյանը, Ելենա Հախվերդյանը: Իրականացվել են մի շարք միջոցառումներ, այդ թվում վերապատրաստումներ, ինտերակտիվ հանդիպում-քննարկումներ օգոստոս ամսում մոտ երեք տասնյակ և սեպտեմբեր ամսում մոտ ութ տասնյակ մասնակիցների՝ երիտասարդ դասախոսների, բակալավրիատի և մագիստրատուրայի ուսանողների, մասնագետ-հոգեբանների հետ և 3-5 տարեկան, ինչպես նաև 6-8 տարեկան երեխայի մտավոր և հոգեբանական զարգացածության աստիճանի որոշման պրակտիկ ցուցադրական պարապմունքներ և այլն:

Լայն համագործակցություն է սկսվել Պաշտպանության բանակի հետ: Բացի սպա-հոգեբանների հետ հոգեբանական հավաքներ անցկացնելուց, հստակեցվել են այն գլխավոր խնդիրները, որոնց ուղղությամբ կենտրոնը նախատեսում է իրականացնել համապատասխան աշխատանքներ:

- Ի՞նչ սկզբունքով են ընտրվելու կենտրոնի աշխատակիցները և արդյո՞ք ընդգրկվելու են նաև ուսանողներ:

- Մեր կողմից մշակվել է մասնագետների ընտրության ռազմավարություն, ըստ որի հայտատուները մասնակցելու են համապատասխան դասընթացների, որտեղ նրանց մոտ պրակտիկ հմտություններ ձևավորելուց, ստուգելուց հետո կտրամադրվեն համապատասխան վկայականներ՝ ՀՊՄՀ, ԱրՊՀ ռեկտորների, «Ապագա» ՀԿ տնօրենի ստորագրություններով և կտրվեն կոնկրետ հանձնարարականներ՝ առաջադրված մեթոդիկաներով ու գործիքներով ինքնուրույն աշխատանքներ կատարելու համար:

ՀԱՆԴԻՊՈՒՄ ԹՈՒՐՔԱԳԵՏԻ ՀԵՏ

ԱրՊՀ մի խումբ ուսանողների և դասախոսների հետ հանդիպում է ունեցել Արցախ այցելած ամերիկաբնակ հայազգի թուրքագետ Հայկարամ Նահապետյանը:

Հանդիպման ընթացքում ԱՄՆ-ում լրագրողական ակտիվ գործունեություն ծավալող թուրքագետը ներկայացրել է հայկական լոբբինգի գործունեությունը, նրա ձեռքբերումները, տարբերությունները ադրբեջանական լոբբինգից:

Լոբբինգի դասական և մեզ հայտնի ձևերից բացի, Հ. Նահապետյանն անդրադարձել է ԱՄՆ-ի հայ համայնքի և հայկական լոբբիստական կազմակերպությունների, ինչպես նաև անհատների գործունեությունը, ապա ներկայացրել փաստեր գրանցված հաջողությունների վերաբերյալ:

«Շատ հաճախ հակաադրբեջանական գործունեությունը ոչ թե խմբավորումների, այլ առանձին անհատների գործունեություն է: Բազմաթիվ դեպքեր են եղել, երբ անհատները կարողացել են շրջել նրանց մի քանի ծրագրերի ընթացքը, տապալել այս կամ այն փաստաթղթի կիրառությունը: Այս դեպքում վստահաբար կարող ենք հակադարձել հայտնի ասացվածքին և պնդել, որ մի ծաղկով ևս կարող է գարուն լինել»,- նշել է նա:

Այսպես, հայկական լոբբինգ իրականացնող մի քանի կազմակերպությունների և անհատների հաջողվել է ձախողել ադրբեջանական լոբբիստների հակահայկական մի քանի տասնյակ նախաձեռնություններ, ավելին՝ նրանք հաջողել են այդ նախաձեռնությունների ընթացքը շրջել հօգուտ հայկականության:

Խոսելով ամերիկա-ադրբեջանական լոբբիստական խմբավորումների մասին՝ թուրքագետը նշել է նաև, որ 2014 թվականից սկսած ադրբեջանական լոբբինգը անկման միտումներ է արձանագրել, ինչը բնականաբար կապված է տնտեսական ճգնաժամի, մասնավորապես նավթի գնանկման հետ: Այսինքն՝ լոբբինգին հատկացվող դրամական միջոցների կրճատումը հանգեցրել է ադրբեջանական ընդհատակյա գործունեության նվազման: Մյուս կողմից՝ ադրբեջանական և թուրքական իշխանությունները ամերիկյան գործընկերներին կաշառելու համար այլևս բավարար միջոցներ չեն հատկացնում: Գործընկերային նույն հարաբերությունները դադարել կամ նվազագույնի են հասցվել նաև հայկական կողմի՝ ամերիկա - ադրբեջանական հարաբերությունների կանխակալության բացահայտման ջանքերի շնորհիվ:

ԱրՊՀ պրոռեկտոր Վ. Յարամիշյանն իր խոսքում շնորհակալություն է հայտնել Հ.Նահապետյանին՝ Արցախի պետական համալսարանում դասախոսությամբ հանդես գալու համար և կարևորել նրա ծավալած գործունեությունը: Պրոֆեսոր Ս. Խանյանն իր հեղինակած գրքերից նվիրել է Հ. Նահապետյանին:

Հանդիպման վերջում թուրքագետը պատասխանել է ներկաների հարցերին:

ԱՐՊՀ ՈՒՍԱՆՈՂՈՒԹՅԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎԵՑ Ս. ԽԱՆԶԱԴՅԱՆԻ «ԱՆԴՐԱՆԻԿ» ՎԵՊԻ ՌՈՒՍԵՐԵՆ ՏԱՐԲԵՐԱԿԸ

Սեպտեմբերի 4-ին հայագիտական կենտրոնում հյուրընկալվել էր Սերո Խանզադյանի «Անդրանիկ» վեպը ռուսերեն թարգմանած Շողեր Ամիրխանյանը:

Թարգմանչուհին համալսարանականներին է ներկայացրել իր աշխատանքն ու մանրամասներ պատմել թարգմանության ընթացքից:

Մասնագիտությամբ ճարտարապետ Շ. Ամիրխանյանը գրքին ծանոթացել է Սպիտակի գրախանութներից մեկում: Հենց գրախանութում թերթելով գրքի էջերը, ինչպես ինքն է խոստովանում, սիրահարվել է:

«Առաջին անգամ բացահայտեցի Անդրանիկին և ցանկացա, որ նրան բացահայտեն բոլորը: Այդպես ծեռնամուխ եղա գրքի թարգմանությանը՝ ինձ համար բացելով Անդրանիկ անհատի շերտերն ու խորքերը, հասու եղա զորավար դառնալու նրա անցած ճանապարհին»,- նշում է հեղինակը:

Գիրքը, թարգմանչի խոսքով, հանրագիտարանային տվյալներ է հաղորդում ոչ միայն Անդրանիկ զորավարի, այլև նրա ապրած ժամանակաշրջանի կարևոր դեպքերի և դեմքերի մասին:

Գրքի թարգմանությունը նվիրված էր երեք կարևոր իրադարձությունների՝ Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին, Անդրանիկ Օզանյանի ծննդյան 150 և գրքի հեղինակի՝ Սերո Խանզադյանի ծննդյան 100-ամյակներին:

ԳԻՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆԸ ՀԱՄԱԼՐՎՈՒՄ Է ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՄԲ

Գիտելիքի և դպրության օրվա առթիվ ԱրՊՀ գիտական գրադարանին գրքերի մեծ խմբաքանակ է նվիրել բանաստեղծ, թարգմանիչ, «Գեղarm» հանդեսի հիմնադիր-խմբագիր, «Ոգի-Նաիրի» գեղարվեստական կենտրոնի տնօրեն Հրանտ Ալեքսանյանը:

Տարիներ շարունակ «Ոգի-Նաիրի» գեղարվեստական կենտրոնը զբաղվում է հայ և օտարազգի հեղինակների ստեղծագործություններով, տպագրում ինչպես հայ արդի պոեզիայի և արձակի նմուշների անգլերեն և ռուսերեն թարգմանություններ, անպես էլ օտարազգի հեղինակների ստեղծագործություններ՝ հայերեն թարգմանությամբ:

Այս շարքից ավելի քան 250 միավոր գիրք օրերս Հ. Ալեքսանյանը նվիրել է մայր բուհի գիտական գրադարանին:

Նշենք, որ ընթացիկ ուսումնական տարվա սեպտեմբեր ամսվա դրությամբ ԱրՊՀ գիտական գրադարանում հաշվառված է ավելի քան 105 հազար միավոր գիրք, որից 1068-ը գրադարանը ստացել է նախորդ ուսումնական տարվա ընթացքում:

Գրադարանի վարիչ Լաուրա Առստամյանի խոսքով, գրադարանը, նվիրատվությունների շնորհիվ, պարբերաբար համալրվում է մասնագիտական ժամանակակից գրականությամբ:

«Խոշոր նվիրատուներից են Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանը, Երևանի պետական համալսարանը, Հայկական պետական մանկավարժական համալսարանը, Հայ-ռուսական համալսարանը, առանձին անհատներ: Նախորդ ուսումնական տարում այս համալսարանների կողմից կատարված նվիրատվությունների շնորհիվ գրադարանի գրքային ֆոնդը համալրվել է հատկապես տնտեսագիտական և իրավաբանական ժամանակակից գրականությամբ»,- նշել է պատասխանատուն:

Այն, որ գրադարանի գրքային ֆոնդն արդիականացման կարիք ունի, պատասխանատուները չեն ժխտում, բայց և ընդգծում են այն հանգամանքը, որ համալսարանականները հետաքրքրված են և օգտվում են առկա տպագիր և էլեկտրոնային պաշարներից:

Համալսարանական բարեփոխումների արդյունքում աճել է ընթերցողների թիվը: Այս են վկայում հատկապես էլեկտրոնային գրադարանի օգտատերերի ցուցանիշները, ինչը գրադարանի աշխատակիցները պայմանավորում են էլեկտրոնային դասախոսությունների փաթեթների մուտքագրմամբ:

«Ավելի քան մեկ տարի է, ինչ բոլոր առարկաներից կազմված էլեկտրոնային դասախոսությունների փաթեթներով համալրվում են էլեկտրոնային գրադարանի պաշարները: Այս գործընթացը, թեկուզ դանդաղ, բայց ընթացքի մեջ է: Դրանք պարբերաբար նաև թարմացվում են»,- հավաստիացնում են էլեկտրոնային գրադարանի պատասխանատուները:

Ի ՆՇԱՆԱՎՈՐՈՒՄՆ ԳՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՕՐՎԱ

Գրագիտության և գերմաներենի միջազգային օրերի կապակցությամբ ԱրՊՀ բանասիրական ֆակուլտետի բոլոր մասնագիտությունների ավագ կուրսերի ուսանողների շրջանում կազմակերպվել է գիտելիքների ստուգում՝ թելադրության միջոցով:

Բանասիրական ֆակուլտետի դեկան, բ.գ.թ., դոցենտ Լուսինե Մարգարյանն ու համապատասխան ամբիոնների վարիչները ներկաներին շնորհավորել են գրագիտության օրվա կապակցությամբ, ապա կարևորել օրվա խորհուրդն ու նրա նշանակությունը հասարակության կյանքում:

«Թող գիտելիքը լինի ուղենիշ, գրագիտությունը՝ չափանիշ: Միայն այս դեպքում դուք կձգտեք նոր որակների և կգտնեք ձեր արժանի տեղը», - նշել է Լ. Մարգարյանն ուսանողներին ուղղված իր խոսքում:

Բարձր ցուցանիշներ ցուցաբերած մի շարք ուսանողներ ֆակուլտետի ղեկավարության կողմից խրախուսվել են գովասանագրերով:

ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ՓՈՒԼՈՒՄ ԵՆ

Սեպտեմբերի 19-21-ը ԱրՊՀ-ում կազմակերպվել են պրակտիկ հոգեբանական դասընթացներ, որոնց մասնակցել են մանկավարժության և հոգեբանության ամբիոնի դասախոսներ, հանրակրթական հաստատությունների հատուկ և սոցիալական մանկավարժներ, հոգեբաններ, սպա-հոգեբաններ, ուսանողներ:

Օրեր առաջ ԱրՊՀ գիտխորհրդի նիստում հաստատված «Հոգեբանական կենտրոն»-ի կանոնակարգի առաջին քայլերից էր հոգեբանական կենտրոն ունենալու գաղափարը գործնականում իրականություն դարձնելը: Ուսումնասիրելով Հայկական պետական մանկավարժական համալսարանի և «Ապագա» հոգեբանական կենտրոնի երեսնամյա փորձն ու հիմնվելով տեղի ներուժի վրա՝ ԱրՊՀ հոգեբանական կենտրոնը սկսել է իր գործունեությունը, որի առաջին քայլերից են հոգեբանական հավաքները:

Կենտրոնի նախաձեռնողներից ԱրՊՀ պրոռեկտոր Վիտյա Յարամիշյանը բացման խոսքում ներկայացրել է կենտրոնի նպատակներն ու խնդիրները. «Ստեղծվել է այնպիսի իրավիճակ, երբ համալսարանավարտ հոգեբանը դժգոհում է աշխատատեղի բացակայությունից այն դեպքում, երբ գործատուն փնտրում է որակյալ մասնագետներ: Կենտրոնը կոչված է մի կողմից պատրաստելու պրակտիկ հոգեբաններ՝ բավարարելով պահանջարկը, մյուս կողմից՝ իր առաջարկած ծառայություններով նպաստելու հանրապետության տարբեր ոլորտներում առկա խնդիրների հաղթահարմանը»:

ԱրՊՀ ռեկտոր Մանուշ Մինասյանը ողջունել է հավաքի մասնակիցներին, ապա շնորհակալություն հայտնել ՀՊՄՀ ղեկավարությանն ու «Ապագա» հոգեբանական կենտրոնի հիմնադիր-տնօրեն Դ. Բեջանյանին և նրա գործընկերներին՝ կենտրոնին ցուցաբերած աջակցության համար:

«Նախորդ տարիների այսպիսի հանդիպումներից հերթականը տարբերվելու է նրանով, որ իրավիճակային չէ, այլ համարձակ քայլ՝ մեծ գործից առաջ, նույնն է, թե նոր հանդիպումների սկիզբ»,- ասել է ռեկտորը:

Իրենց ելույթներում հոգեբանական կենտրոն հիմնադրելը ողջունել ու նրա նախանշած խնդիրները կարևորել են ԳԹԿ տնօրեն Յու. Քարամյանը, ԿԳՍ նախարարության հանրակրթության բաժնի պետ Ռ. Բազիյանը, ՊԲ հոգեբանական աշխատանքների ներկայացուցիչ Ն. Պետրոսյանը:

Հոգեբանական կենտրոն ունենալու անհրաժեշտությունը պայմանավորված էր նաև ուսանողների դիրքորոշմամբ և արդարացի պահանջով: Իրենց ակնկալիքների և սպասելիքների մասին խոսելիս մանկավարժության և սպորտի ֆակուլտետի ՈՒԳԸ նախագահ Ա. Սևումյանը նաև շնորհակալություն է հայտնել համալսարանի ղեկավարությանը՝ իրենց առաջարկին ընդառաջելու և մասնագիտական կայացմանը նպաստող պայմաններ ստեղծելու համար:

«Ապագա» հոգեբանական կենտրոնի հիմնադիր-տնօրեն Դ. Բեջանյանը համոզված է, որ սեղմ ժամկետներում իրենց թիմին կհաջողվի տեղի կենտրոնի ապագա աշխատակիցներին փոխանցել իրենց 30-ամյա փորձն ու ստեղծել բազմապրոֆիլ կենտրոն. «Համոզված եմ, որ մայր բուհի նախաձեռնությունը հաջողությամբ է պսակվելու: Այսպես մտածելու համար ինձ հիմքեր է տալիս համալսարանի ղեկավարության պատրաստակամությունն ու տեղի մասնագետների ներուժը»:

ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ ՀՊՏՀ-ՈՒՄ ՄԱՍՆԱԿՑԵԼ ԵՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ

ԱրՊՀ-ՀՊՏՀ համագործակցության շրջանակներում սեպտեմբերի 25-ից 29-ը ԱրՊՀ տնտեսագիտության ֆակուլտետի մոտ երկու տասնյակ ուսանողներ ՀՊՏՀ-ում մասնակցել են դասընթացների:

ԱրՊՀ տնտեսագիտության ֆակուլտետի բոլոր բաժինների ավագ կուրսերի ուսանողները ՀՊՏՀ ֆակուլտետների համապատասխան բաժիններում մեկ շաբաթվա ընթացքում մասնակցել են ուսումնական պլանով նախատեսված դասընթացներին և մշակութային միջոցառումների:

Տնտեսագիտության տեսություն մասնագիտության 4-րդ կուրսի ուսանողներից Էմմա Պետրոսյանը կարևորում է հայաստանյան բուհերի հետ համագործակցությունը, հատկապես ուսանողական փոխայցելությունները: Նրա խոսքով, այդպիսիք հնարավորություն են տալիս գնահատելու ոչ միայն սեփական գիտելիքները, այլև՝ բուհի հնարավորությունները:

«Երկար ժամանակ ես և իմ ընկերները թյուր կարծիք ունեինք այն մասին, որ գուցե ինչ-որ տեղ զիջում ենք Հայաստանի բուհերում սովորող մեր հասակակիցներին: Այս այցելությունը լավագույն առիթն էր համոզվելու, որ մենք և նրանք նույն հարթակի վրա ենք գտնվում»,- ասում է Պետրոսյանը:

Ուսանողուհին ավելացնում է, որ ՀՊՏՀ-ում անցկացրած մեկ շաբաթվա ընթացքում նրանք ոչ միայն փորձ և վստահություն են ձեռք բերել, այլև կարողացել են կարծիք ձևավորել Արցախի պետական համալսարանի, նրա դասախոսական կազմի և ուսանողության մասին. «Բոլորս համակարծիք էինք այն հարցում, որ մեր դասախոսական կազմը ոչնչով չի զիջում գործընկեր համալսարանների դասախոսական կազմին և, հետևաբար, մենք նույնպես չենք զիջում նրանց»:

Բացի ծրագրով նախատեսված դասընթացներից, իրենց ցանկությամբ ուսանողները լսել են նաև մարքեթինգին վերաբերող բանախոսություն, որը վարել է մարքեթինգի ամբիոնի դասախոս Գրիշա Ամիրխանյանը:

ՀՊՏՀ ղեկավար և պրոֆեսորադասախոսական կազմից բացի, ԱրՊՀ ուսանողները հանդիպումներ են ունեցել նաև ուսանողական ինքնավար կառույցների հետ, ծանոթացել նրանց առօրյային և գործունեությանը, մասնակցել ինտելեկտուալ խաղի՝ զբաղեցնելով մրցանակային տեղ: